

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
(Ծննդյան 125-ամյակի առթիվ)

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՂԱԼՅԱՆ

Հայ ժողովրդի մաքառումներով անցած ճանապարհին շատ են եղել օրհասական պահեր, երբ թվացել է, թե այլևս փրկության հնար չկա: Մակայն այդպիսի պահերին, ասես ի վերուստ, հայտնվել են հոգով ու ժեղ ու խիզախ անհատներ, որոնք կարողացել են ելք գտնել և ժողովրդին դուրս բերել ծանր կացությունից: Մեր բազմադարյան պատմությունը հարուստ է նման դեպքերով ու դեմքերով: Այդպիսի մի անելանելի վիճակ էլ ստեղծվել էր 1920-ական թվականների սկզբին, երբ հայ ժողովրդի լինել-չլինելու հարցն էր շահարկվում: Դրա մասին շատ է խոսվել ու գրվել:



Ա. Ֆ. Մյասնիկյանի դիմանկարը
(1909 թ.)
Գործ՝ Մ. Սարյանի

Չնայած Ալ. Մյասնիկյանի կյանքին ու գործունեությանը նվիրվել են մի շարք մենագրություններ¹ ու բազմաթիվ հոդվածներ, սակայն ցանկանում ենք մերօրյա ընթերցողներին հակիրճ ծանոթացնել նրա հարուստ ու հերոսական կենսագրությանը:

Չնայած Ալ. Մյասնիկյանի կյանքին ու գործունեությանը նվիրվել են մի շարք մենագրություններ¹ ու բազմաթիվ հոդվածներ, սակայն ցանկանում ենք մերօրյա ընթերցողներին հակիրճ ծանոթացնել նրա հարուստ ու հերոսական կենսագրությանը:

Ալեքսանդր Ֆեոդորի Մյասնիկյանը ծնվել է 1886 թ. փետրվարի 9-ին (հին տոմարով՝ հունվարի 27-ին), Նոր Նախիջևան քաղաքում (ներկայումս՝ Դոնի Ռոստովի շրջագծում), հայկական նահապետական բազմանդամ ընտանիքում: Նրա հայրը՝ Ասատուր (Աստվածատուր)² Մյասնիկյանը (Մյասնիկով), զբաղվում էր մանր առևտրով և իր ստացած չնչին վաստակով հազիվ էր կարողանում պահպանել ընտանիքի

¹ Ա. Կարինյան, Դ. Միմոնյան, Ալ. Մարտունի-Մյասնիկյան (Նյութեր կենսագրության համար), Երևան, 1925, Յ. Խանգաղյան, Ալեքսանդր Մյասնիկյան (բնութագրման փորձ), Երևան, 1926, Ա. Մնացականյան, Ալեքսանդր Մյասնիկյանի զինվորական գործունեությունը (1917-1921 թթ.), Երևան, 1947, նույնի՝ Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 1955, Ս. Ավագյան, Համառոտ ակնարկ Ալ. Մյասնիկյանի 1921-1925 թթ. ժողովրդավարական-հրապարակախոսական գործունեության, Երևան, 1958, նույնի՝ Ալեքսանդր Մյասնիկյանը հրապարակախոս, Երևան, 1964, Ս. Սալոմոն. Жизнь, отданная народу.- В кн.: Солдаты партии. М., 1971; Ա. Ոսկերչյան, Ալեքսանդր Մյասնիկյանը և գրական հարցերը, Երևան, 1974, Գ. Ղարիբջանյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 1976, Հ. Հովսեփյան, Իրավաբանական հարցերը Բ. Կունյանցի և Ալ. Մյասնիկյանի աշխատություններում, Երևան, 1979, Ս. Ամիրջյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 1986, Տ. Դևրիկյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 2006 և այլն:

² Նկատենք, որ «Աստվածատուր» անունը օտար միջավայրում հնչեղ չլինելու պատճառով ժամանակին այն թարգմանել են ռուսերեն՝ Բոգդան, կամ էլ հունարեն՝ Ֆեոդոր:

գոյությունը: Ալ. Մյասնիկյանը նոր էր դարձել ութ տարեկան, երբ վախճանվում է հայրը՝ ընտանիքը թողնելով նյութական ծանր կացության մեջ: Ուստի նա մանկությունից ճաշակում է անապահով կյանքի դառնությունները: Հետագայում՝ 1922 թ., երբ լրացնում է իր անձնական գործը, անկետայի այն հարցին, թե ո՞ր տարիքից է ապրում իր վաստակով, նա պատասխանել է՝ 15 տարեկանից³:

Ալ. Մյասնիկյանը 1894 թ. ընդունվել է Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի ծխական գիշերօթիկ դպրոցը, որը սպասավորներ էր պատրաստում հայ լուսավորչական եկեղեցու համար: Դպրոցում նա հայոց լեզվից ու գրականությունից ձեռք է բերում որոշակի գիտելիքներ, որը Նոր Նախիջևանի ռուսահայ գաղթօջախի երեխաների համար շատ էր անհրաժեշտ իրենց ազգային դիմագիծն ու ինքնությունը պահպանելու համար: Փոքրիկ Ալեքսանդրը, մինչ դպրոց ընդունվելը, լավ գիտեր ռուսերեն, իսկ հայերեն խոսում էր Նախիջևանի բարբառով: Ծխական դպրոցը նրան օգնում է հաղորդակցվելու հայոց գրական լեզվին, ծանոթանալու հայ գրողների ստեղծագործություններին: Այս ուղղությամբ նա ցուցաբերում է լուրջ հետաքրքրություն ու առաջադիմություն: Նրա ուսուցիչ Հակոբ Գենջյանը (հետագայում հայտնի ֆուտուրիստ գրող Կարա Դարվիշը) իր «Անհանգիստ մանուկը» վերտառությամբ հուշերում գրում է. «Հենց սկզբից նկատելի էին Ալեքսանդրի հակումներն ու առանձին հետաքրքրությունը դեպի գրականությունը»՝ միաժամանակ նշելով, որ ութամյա այդ երեխան մի մաքուր տեսք ուներ, որի մեջ արտագրում էր հայ բանաստեղծների լավագույն ոտանավորները, մի բան, որը «ոչ ոք նրան չէր հանձնարարել: Ալեքսանդրը դրանք բերանացի գիտեր և արտասանում էր սիրով, աշխույժ, կենդանի շնչով»⁴: Գիշերօթիկում սովորելու չորս տարիների ընթացքում Ալեքսանդրը մյուս աշակերտներից տարբերվում է իր հարցասիրությամբ, աշխատասիրությամբ, կազմակերպվածությամբ, նպատակասլացությամբ ու գործնականությամբ: «Հենց մտնում էի դասարան, անհանգիստ մանուկը մատը բարձրացրած ցցվում էր դեմս՝ ե՛ս, ե՛ս գիտեմ դասս: Նա առաջին աշակերտն էր դասարանում: Եթե մեկը չգիտեր դասը, ուսուցիչները նրան էին հարցնում: Իսկ դասերից հետո նա ակտիվորեն մասնակցում էր արտադասարանական բոլոր աշխատանքներին: Ալեքսանդրն ամենաեռանդունն էր և ամենանվիրվածը, բոլոր հանձնարարություններն ու աշխատանքները նա ճշտությամբ էր կատարում: Նա պետք է ամեն տեղ լիներ և առաջինը լիներ: Անհանգիստ մանուկն ամեն բանի մասնակից էր»⁵, - հուշերում գրում է Հ. Գենջյանը:

Ալ. Մյասնիկյանը, 1898 թ. ավարտելով Սուրբ Խաչի ծխական գիշերօթիկ դպրոցը և ստանալով նախնական կրթություն, նույն տարում ընդունվում է Նոր Նախիջևանի հայոց հոգևոր սեմինարիան, մի կրթօջախ, ուր ընդունվում էին չքավոր դասի այն երեխաները, որոնք ուսման մեջ ցուցաբերել էին բարձր առաջադիմություն: Իսկ Ալեքսանդրը և՛ չքավոր ընտանիքից էր, և՛ ուսման մեջ՝ առաջավոր:

³ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 4004, ց. 1, գ. 70:

⁴ «Մարտակոչ» (Թիֆլիս), 25. III. 1925:

⁵ Նույն տեղում:

Մեմինարիան, ուր ուսուցումը վեցամյա էր, նա ավարտում է հինգ տարում՝ 1903 թվականին: Այստեղ ևս Ալեքսանդրը ցուցաբերում է բարձր առաջադիմություն, ամուր կարգապահություն և գիտությունների նկատմամբ մեծ սեր ու հակում: Ուսումնառության ընթացքում նա ձեռք է բերում հարուստ գիտելիքներ ազգային գրականությունից ու պատմությունից, ծանոթանում է ռուս գրականությանն ու մշակույթին, խորապես տիրապետում է ռուսաց լեզվին: Հայտնի է, որ Նոր Նախիջևանում էին ծնվել ու գործել հայ գրականության ու մշակույթի ականավոր այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Միքայել Նալբանդյանն ու Ռափայել Պատկանյանը, որոնց ստեղծագործություններով հրապուրվում է պատանի Ալեքսանդրը, միաժամանակ ընթերցում է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» ու Բաֆֆու հայրենասիրական վեպերը: Նա ձեռք է բերում մտածելու, ստեղծագործելու, եղելությունները համադրելու ու վերլուծելու կարողություններ: Մեմինարիայում սովորելու տարիներին Ալ. Մյասնիկյանը ծանոթանում է հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի պատմությանը, դաստիարակվում այդ պայքարի հերոսների օրինակով: Ուսումնառության վերջին տարում նա դառնում է քաղաքում գործող կիսալեզալ աշակերտական խմբակի անդամ:

Ավարտելով սեմինարիան՝ 1904 թ. Ալ. Մյասնիկյանն ընդունվում է Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը, սակայն կարճ ժամանակ անց՝ նյութական ծանր վիճակի պատճառով, ստիպված էր թողնել այն: Այդ առթիվ, ավագ ընկերների խորհրդով, նա 1905 թ. սեպտեմբերին խնդրագիր է ներկայացնում Նոր Նախիջևանի բարեգործական ընկերությանը, որի մեջ հայտնում է. «Այսօր գտնվում եմ նյութական սուղ դրության մեջ, չկարողանալով հայթայթել նույնիսկ օրական սնունդս և ուսումնական պիտույքներս, ուստի խոնարհաբար խնդրում եմ Ձերդ մեծապատվությանը՝ ի նկատի ունենալով իմ նեղ վիճակը, նշանակել ինձ գոնե 50 ռուբլի նպաստ»⁶: Չնայած Մյասնիկյանն այդ օգնությունը չի ստանում, բայց մեծ զրկանքների գնով, այնուամենայնիվ, շարունակում է ուսումնառությունը:

Ճեմարանում Ալ. Մյասնիկյանի դասընկերներն են եղել բանաստեղծ Վահան Տերյանը, հետագայում անվանի գրականագետներ և պետական գործիչներ դարձած Պողոս Մակինցյանն ու Ցոլակ Խանզադյանը և ուրիշներ: Սովորելու տարիներին նա ծանոթանում է մարքսիզմի դասականների երկերին՝ նպատակ ունենալով դրանցում գտնել իրեն հուզող հարցերի պատասխանները: Միաժամանակ ուսումնասիրում է Ա. Գերցենի, Ն. Չերնիշևսկու, Վ. Բելինսկու, Ն. Դոբրոլյուբովի և մյուս հեղափոխական-դեմոկրատների ստեղծագործությունները, ծանոթանում նրանց հայացքներին, մասնակցում է ուսանողական գաղտնի խմբակի ժողովներին: Երբ 1905 թ. աշնանը Պետերբուրգում ցարական ինքնակալության դեմ սկիզբ առած գործադուլների ալիքը հասնում է Մոսկվա ու դեկտեմբերին վերածվում զինված ապստամբության, որին մասնակցում էր նաև ուսանողությունը, Ալ. Մյասնիկյանը դառնում է դրա ակտիվ մասնակիցը:

⁶ Տե՛ս ՀՄԱ, ֆ. 4004, ց. 1, գ. 2, թ. 21:

1906 թ. ամառային արձակուրդների օրերին նա գալիս է Նոր Նախիջևան, կապվում է Դոնի Ռոստովում այդ ժամանակ գործող բոլշևիկյան կազմակերպության հետ: Նույն տարում ընդունվում է ՌՄԴԲԿ շարքերը, չնայած Նոր Նախիջևանի սեմինարիայում սովորելու տարիներին համակրել էր ՀՅԴ կուսակցությանը: Այդ մասին հետագայում գրել է. «1903 թ. սեպտեմբերից մինչև 1904 թ. մարտը համակրել եմ դաշնակցությանը, նրա էսէռական արտահայտությանը»⁷:

Վերադառնալով Մոսկվա՝ Ալ. Մյասնիկյանն ուսումնառության հետ զբաղվում է հեղափոխական գործունեությամբ: Մակայն Դոնի Ռոստովում եղած ժամանակ ցարական ժանդարմերիան նրան առել էր հսկողության տակ, որը և շարունակվում է Մոսկվայում:

Ալ. Մյասնիկյանը Լազարյան ճեմարանն ավարտել է 1906 թվականին և անմիջապես ընդունվել Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այստեղ նա ուսանողության շրջանում շարունակել է իր ընդհատակյա հեղափոխական գործունեությունը: Նույն տարում ցարական ժանդարմերիան խուզարկություն է կատարել նրա բնակարանում ու հայտնաբերել անլեզալ հեղափոխական գրականություն, որի համար էլ ձերբակալվել և նահանգապետի կարգադրությամբ, որպես վտանգավոր անձ, արտաքսվել է Մոսկվայից՝ զրկվելով Ռուսաստանի երկու մայրաքաղաքներում բնակվելու իրավունքից: Ոստիկանների հսկողությամբ նա մեկնել է Բաքու, որտեղ էլ մինչև 1908 թ. ծավալել է հեղափոխական գործունեություն: Այդ ընթացքում Ալ. Մյասնիկյանը ծանոթացել է Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Պ. Ջափարիձեի և հեղափոխական այլ գործիչների հետ: Միաժամանակ հնարավորություն է ունեցել ծանոթանալու Հայաստանի վիճակին, եղել է հայկական մի քանի բնակավայրերում, այդ թվում՝ Շուշիում ու Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր):

Բաքվում եղած շրջանում Ալ. Մյասնիկյանը հայերեն և ռուսերեն լեզուներով հանդես է եկել մի շարք դասախոսություններով՝ նվիրված ազգային ու ագրարային հարցերին, որոնք ռուսական առաջին հեղափոխության տարիներին հուզում էին հասարակության լայն շերտերին: Հիշատակելի է, որ դասախոսությունների ընթացքում նա շարունակ բանավիճում է տեղի ազգային-քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ և համոզիչ փաստարկներով հիմնավորում իր եզրահանգումների ու տեսակետների ճշմարտացիությունը: Կարճ ժամանակամիջոցում Ալ. Մյասնիկյանը ձեռք է բերում Բաքվի բանվորների, որի գերակշիռ մասը հայեր էին, համակրանքը, որոնք «Նրան սիրում էին որպես անկեղծ, անձնվեր բոլշևիկի և բանվոր դասակարգի շահերի պաշտպանի»⁸: Ալ. Մյասնիկյանի պատրաստվածությունն ու այդ օրերի գործունեությունը բարձր է գնահատել Ստ. Շահումյանը: Իսկ Ա. Կարինյանը հետագայում գրել է. «Մյասնիկյանը կարողանում էր խոսել պարզ, հստակ, տրամաբանորեն: Նա անփոխարինելի տրիբուն էր ինչպես բանվորական, այնպես էլ ուսանողական շրջաններում... Դաշնակները, կատաղելով նրա էլույթներից, անցնում էին դեմագոգիայի, սակայն չէին կարողանում ձախողել Ալ.

⁷ ՀԱԱ, ֆ. 4004, ց. 1, գ. 70:

⁸ Տե՛ս «Մարտակոչ», 25. III. 1925:

Մյասնիկյանի կազմակերպած ժողովները: Նա թվերին հակադրում էր թվեր, ցիտատներին՝ ցիտատներ, խոսում էր իրոնիայով, սպանում էր հակառակորդներին»⁹:

Ալ. Մյասնիկյանը Բաքվի բազմալեզու մամուլում հանդես է եկել հրապարակախոսական հոդվածներով, աշխատակցել է տեղական Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանն ու նրա մամուլին, սակայն հետագայում չի ընդունել նրա գաղափարախոսությունը, խիստ քննադատության է ենթարկել այդ կազմակերպության պարագլուխներ Բախշի Բշխանյանի և Դավիթ Անանունի հալածումները¹⁰:

Բաքվում՝ ժամանակի հեղափոխական պայքարի այդ հորձանուտում, Ալ. Մյասնիկյանն ամեն օր շփվում էր բանվորների հետ, ձեռք բերում հարուստ փորձ, համայրում իր տեսական ու փորձնական գիտելիքները: Մակայն նա գիտակցում էր, որ պետք է անպայման շարունակի ուսումնառությունը, ստանա բարձրագույն կրթություն: Այդ նպատակով 1908 թ. նրան հաջողվում է տեղափոխվել Մոսկվա և նույն տարում էլ կրկին ընդունվել Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այստեղ ուսումնառության ընթացքում նա ամբարում է գիտելիքների հարուստ պաշար, զբաղվում գիտությունների ավելի լայն բնագավառներով ու լուրջ հաջողությունների է հասնում նաև ինքնակրթությամբ:

1911 թ. Ալ. Մյասնիկյանը գերազանցությամբ ավարտում է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի տնտեսագիտության բաժինը, անմիջապես գորակոչվում է բանակ և ծառայությունն անցկացնում Մոսկվայի կայսզորի գորանոցներից մեկում: Այստեղ էլ նա ձեռք է բերում ռազմական հմտություններ ու գիտելիքներ և պահեստի ենթասպայի կոչումով գորացրվում:

Ձորացրվելուց հետո Ալ. Մյասնիկյանը կրկին բնակություն է հաստատում Մոսկվայում և աշխատում որպես երդվյալ հավատարմատարի օգնական: Մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը շարունակում է ծավալել նաև անլեզալ հեղափոխական գործունեություն՝ դառնալով Մոսկվայի բոլշևիկյան կազմակերպության հեղինակավոր դեմքերից մեկը: Միաժամանակ զբաղվում է հայ հասարակական մտքի պատմության ուսումնասիրությամբ և այդ հարցերի շուրջ մամուլում տպագրում է մի շարք հոդվածներ:

Դեռևս 1910 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Հորիզոն» թերթում հրատարակվում է նրա «Միքայել Նալբանդյան» ուսումնասիրությունը՝ Ալ. Մարտունի գրական կեղծանունով: Այդ աշխատության մեջ նա, բանավեճի մեջ մտնելով Լեոյի հետ, բացահայտում է մեծ բանաստեղծի ու հեղափոխական-դեմոկրատի դերը հայ գրականության ու հասարակական մտքի զարգացման գործում:

Հայկական հարցը նույնպես այդ տարիներին եղել է նրա ուշադրության կենտրոնում: Երբ 1912 թ. եվրոպական խոշոր տերությունների մասնակցությամբ

⁹ Վրաստանի ազգային արխիվ, ֆ. 31, ց. 1, գ. 424, թ. 7-13:

¹⁰ Ալ. Մյասնիկյանի գործունեության առաջին շրջանի մասին տե՛ս Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Ալ. Մյասնիկյանի հայացքների ձևավորման ու կուսակցական պատկանելության հարցերի շուրջ (1901-1917 թթ.)- «Դրոշակ», 2007, - 4, էջ 36-43:

սկսվեցին ռուս-թուրքական բանակցությունները և դրանց շուրջ ընթացող լայն քննարկումները, մամուլում հրապարակվում էին զանազան տեսակետներ, Ալ. Մյասնիկյանն առաջիններից մեկն էր, որ ռուսական լայն հասարակայնությանը ներկայացրեց Հայկական հարցի էությունը: Հայտնի է նրա 1913 թ. դեկտեմբերի 17-ին Մոսկվայի Պոլիտեխնիկական թանգարանի դահլիճում «Հայկական հարցը» թեմայով կարդացած դասախոսությունը: Հրապարակային այդ ելույթով Ալ. Մյասնիկյանը պարզաբանում է հայությանը հուզող մի շարք խնդիրներ. տալիս է XIX դ. ընթացքում ձևավորված հայ հասարակական մտքի բնութագրությունը, ներկայացնում արևմտահայության վիճակը Թուրքիայի տիրապետության տակ, մերկացնում արևմտյան տերությունների դիվանագիտության նպատակներն ու խարդավանքները՝ անդրադառնալով նաև Հայկական հարցի վերաբերյալ հայ իրականության մեջ գործող քաղաքական կուսակցությունների դիրքորոշմանը և նույն հարցի կապակցությամբ բոլշևիկների վերաբերմունքին:

Ալ. Մյասնիկյանը հետագայում ավելի խորությամբ է զբաղվել ազգային հարցի խնդիրներով ու իր տեսակետներն ամփոփել է 1913 թ. գրած «Ազգային հարցի լուծման մասին» և 1914-ին՝ «Ազգային հարցի մոտիկ անցյալից Ռուսաստանում» խորագրերով աշխատություններում, որոնք, ժամանակի մամուլում տպագրվելուց հետո, «Ազգային հարցի առթիվ» ընդհանուր վերստառությամբ 1919 թ. առանձին գրքով լույս են տեսել Մոսկվայում: Նույն թվականին է տպագրվել նաև Ալ. Մյասնիկյանի «Միքայել Նալբանդյան» գրքուկը, որն ընդգրկում էր մինչ այդ Նալբանդյանի մասին նրա գրած աշխատությունները:

1911–1914 թթ. Ալ. Մյասնիկյանը գրել է նաև մի շարք այլ հոդվածներ ու աշխատություններ: Դրանց մեջ մի առանձին կարևորություն ունի «Հասարակական դասակարգի մասին» գիտահրապարակախոսական ուսումնասիրությունը, որը տպագրվել է Բաքվի «Նոր կյանք» շաբաթաթերթի 1911 թ. -1-ում և 1912 թ. - 3–4-ում: Այստեղ վերլուծվում են գաղափարաքաղաքական բնույթի բազմաթիվ խնդիրներ՝ կապված հասարակական կյանքի տարբեր երևույթների հետ: Հեղինակը մարքսիզմի դիրքերից պարզաբանում է դասակարգային շահերի ու դասակարգային շարժումների էությունը, բացատրում ժամանակի հասարակական-քաղաքական ու սոցիալական կյանքի դրսևորումները¹¹:

Խոր ու անսահման է Ալ. Մյասնիկյանի հայրենասիրությունը, նրա ցանկությունն էր իր ժողովրդին տեսնել ազատ ու խաղաղ պայմաններում, ստեղծագործ աշխատանքով տարված: Դա ցայտուն երևում է նրա գրեթե բոլոր աշխատություններում, որոնք նվիրված են հայ ժողովրդի պատմական ճակատագրին ու նրա մշակույթին: Վկայակոչենք դրանցից միայն մեկը՝ «Երկու կուլտուրական տոն» հոդվածը, որը նա գրել է 1913 թ. հայ գրերի գյուտի 1500 և հայկական տպագրության սկզբնավորման 400-ամյակների առթիվ ու լույս է տեսել «Մշակ» թերթի նույն տարվա նոյեմբերի 26-ի համարում: Ալ. Մյասնիկյանն այս հոդվածով մի շարք նպատակներ է

¹¹ Ալ. Մյասնիկյան. Երկեր հինգ հատորով, հ. 1, Երևան, 1984, էջ 94–124:

հետապնդում: Նա նախ բացահայտում է, թե հայ իրականությունն ինչպես է դիմավորում մշակութային այդ երկու խոշոր տոները, և դրանք ինչ են իրենցից ներկայացնում: Այնուհետև, անդրադառնալով հայկական տպագրության սկզբնավորման տոնին, նա ասում է. «Տառերի գյուտից շատ ժամանակ անցած լույս է տեսնում առաջին հայ գիրքը, որով հայ գրականությունն ու կուլտուրան ավելի հարստանում են»¹²: Այլ Մյասնիկյանը ցավով գրում է, որ այդ տոները նշող և հնագույն մշակույթ ունեցող հայ ժողովրդի վիճակը նախանձելի չէ. «Խավարն ու մութն են պատել նրան. բնության խավարը՝ հասարակական մութը: Տակավին մտավորապես ետ ընկած, տակավին ցրուցան է այդ ժողովուրդը: Եվ թվում է, թե մթության ու խավարի մեջ նա կկորչի»¹³: «Բայց բանաստեղծն ասել է, – շարունակում է Մյասնիկյանը, – Որքան մութ է գիշերը, այնքան պայծառ են աստղերը»¹⁴: Քննադատելով ժամանակի մտավորականությանը, եկեղեցականներին, ունևորներին ու երիտասարդությանը՝ նա գտնում է, որ նրանցից և ոչ մեկը չի մտածում ժողովրդի մասին, այլ տարված են սոսկ իրենց անձնական հաճույքներով, հարստություն դիզելով, ընչաքաղցությանը ու որկրամոլությամբ: Այդ կապակցությամբ նա բերում է V դարի խոշոր փիլիսոփա-մատենագիր Եզնիկ Կողբացու օրինակը և նշում, որ վերջինս իր ժամանակի իսկական հասարակական գործիչ էր, որը տարված էր հասարակական գաղափարներով: Մյասնիկյանը հայ մտավորականությանը և մյուս ուժերին հասարակական գործունեության կոչ է անում՝ ժողովրդին խավարից դուրս բերելու համար: «Խոսքի, լեզվի պայծառ աստղը պետք է որ դուրս բերե ժողովրդին խավարի միջից»¹⁵, – եզրակացնում է նա:

* * *

Եթե չսկսվեր Առաջին համաշխարհային պատերազմը, գուցե Այլ Մյասնիկյանի կյանքն ու գործունեությունն այլ ընթացք ունենային: Սակայն պատերազմի սկզբից նեթ պահեստի պրապորշչիկ Այլ Մյասնիկյանը գորակոչվեց բանակ, ուղարկվեց Արևմտյան ռազմաճակատ և նշանակվեց Դրոգորիչիի ենթասպաներ պատրաստող գնդի ուսումնավարժական գումարտակի հրամանատար: Այստեղ նա իրեն դրսևորեց որպես լավագույն հրամանատար ու ձեռք բերեց մեծ հեղինակություն: 1915 թ. կեսերին Ալեքսանդրը ծառայության է անցնում 10-րդ բանակի շտաբում և մասնակցում մարտական գործողություններին, ապա ուղարկվում է 3-րդ բանակային կորպուսի շտաբ ու շարունակում մասնակցել ռազմական գործողություններին, որոնց ընթացքում ոչ միայն փորձ է ձեռք բերում, այլև կատարելագործում է իր ռազմական գիտելիքները: 1916 թ. դեկտեմբերին տպագրում է «Համեմատական հայացք ռուսական, գերմանական և ավստրիական

¹² Նույն տեղում, էջ 228:

¹³ Նույն տեղում, էջ 229:

¹⁴ Այլ Մյասնիկյանն այստեղ թարգմանաբար օգտագործել է ռուս նշանավոր բանաստեղծ Ա. Ն. Մայկովի հետևյալ տողերը. «Чем ночь темнее, тем ярче звезды». Նույն միտքն է արտահայտել նաև բանաստեղծ Պ. Կ. Կատենինը. «Чем гуше кругом, тем ярче звезды».

¹⁵ Այլ Մյասնիկյան. Երկեր հինգ հատորով, հ. 1, էջ 230:

դաշտային ծառայության կանոնագրքերի մասին» ուսումնասիրությունը: Նույն օրերին էլ ծառայության է անցնում բանակի շտաբում, մասնակցում է Արևմտյան ռազմաճակատում մղվող մարտական գործողություններին ու երթային վաշտերի հետ հասնում Վարշավա:

1917 թ.՝ Նիկոլայ Երկրորդ ցարի գահընկեց արվելուց հետո, Ալ. Մյասնիկյանը Մ. Ֆրունզեի հետ ձևավորում է Մինսկի բանվորների ու զինվորների պատգամավորների սովետը: Ապրիլի 6-ին տեղի է ունենում Արևմտյան ռազմաճակատի զինվորական պատգամավորների առաջին համագումարը, որտեղ էլ նա ելույթ է ունենում: Համագումարն ընտրում է ռազմաճակատային զինվորական կոմիտե և նախագահություն. Ալ. Մյասնիկյանն ու Մ. Ֆրունզեն ընտրվում են նախագահության անդամ: Նրանց նախաձեռնությամբ Մինսկում հիմնադրվում է բոլշևիկյան «Զվեզդա» թերթը, որի առաջին համարը լույս է տեսնում հուլիսի 27-ին: Այդ օրերին էլ Ալ. Մյասնիկյանը Արևմտյան ռազմաճակատի ու մարզի բոլշևիկների կողմից ընտրվում է ՌՄԴԲԿ VI համագումարի պատգամավոր: Համագումարում նա հանդես է գալիս ռազմաճակատի վիճակի և Մինսկի բոլշևիկյան կազմակերպության գործունեության մասին զեկուցումով ու պաշտպանում հեղափոխության հաղթանակի մասին լենինյան թեզիսները: Սեպտեմբերի 15–18-ը տեղի է ունենում Հյուսիս-արևմտյան մարզի (Բելոռուսիայի) և Արևմտյան ռազմաճակատի բոլշևիկների առաջին կոնֆերանսը, ուր ձևավորվում է ՌՄԴԲԿ Հյուսիս-արևմտյան մարզային կազմակերպությունը, որն ընտրում է կոմիտե՝ Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ:

Հոկտեմբերյան հեղափոխության օրերին Ալ. Մյասնիկյանը գտնվում էր Մինսկում: Հոկտեմբերի 26-ին լսելով Պետրոգրադում զինված ապստամբության հաղթանակի լուրը՝ անմիջապես հրավիրում է Մինսկի սովետի նիստ, որը քաղաքում հռչակում է խորհրդային իշխանություն: Նիստում ընտրվում է Հյուսիս-արևմտյան մարզի (Բելոռուսիայի) և Արևմտյան ռազմաճակատի ռազմահեղափոխական կոմիտե, որի ղեկավարն է դառնում Ալ. Մյասնիկյանը:

1917 թ. նոյեմբերի 20-ին Մինսկում սկսվում է Արևմտյան ռազմաճակատի զինվորների II համագումարը, որին մասնակցում էին ՌՄԴԲԿ Կենտկոմի ներկայացուցիչ Ս. Օրջոնիկիձեն և Համառուսաստանյան կենտգործկոմի կողմից՝ Վ. Վոլոդարսկին: Համագումարը լուծարված է համարում ցարական բանակի հրամանատարական կազմը և Կենտկոմի առաջարկով Արևմտյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատար է ընտրում պրապորշչիկ Ալ. Մյասնիկյանին: 1917 թ. նոյեմբերի 25-ին Հյուսիս-արևմտյան մարզկոմի օրգան «Զվեզդա» թերթն այդ մասին հաղորդագրություն է տպագրում:

Հենց այդ օրերին պաշտոնանկ է արվում ռուսական հին բանակի Գերագույն գլխավոր հրամանատար գեներալ Դուխոնինը, որի զորակայանը գտնվում էր Մոզիլն քաղաքում. Գերագույն գլխավոր հրամանատար է նշանակվում պրապորշչիկ Ն. Կոչիլենկոն, տեղակալ՝ Ալ. Մյասնիկյանը: Շուտով Ն. Կոչիլենկոն Մոզիլնից կանչվում է Պետրոգրադ և Գերագույն գլխավոր հրամանատարի պարտականությունները 1917 թ. դեկտեմբերից

դրվում է Ալ. Մյասնիկյանի վրա:

Փաստորեն, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո ՌՄԴԲ(բ)Կ - Կենտկոմը և խորհրդային կառավարությունը Ալ. Մյասնիկյանին միաժամանակ վստահում են բարձր ու պատասխանատու չորս պաշտոն. Հյուսիս-արևմտյան մարզի ռազմահեղափոխական և ՌՄԴԲ(բ)Կ Հյուսիս-արևմտյան մարզային կոմիտեների նախագահ, Արևմտյան ռազմաճակատի գործերի գլխավոր հրամանատար և Գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ, ապա՝ Գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնակատար: Այդ բոլոր ոլորտներում Ալ. Մյասնիկյանը հանդես է բերում տաղանդավոր կազմակերպչի, պետական ու կուսակցական հմուտ ղեկավարի, ռազմաքաղաքական ստրատեգի փայլուն կարողություններ:

1918 թ. գարնանը, երբ Արևելքում բորբոքվել էր պայքարը սպիտակ զենքավորների և չեխ խռովարարների դեմ, Ալ. Մյասնիկյանն ուղարկվեց Վոլգայի շրջանը՝ որպես Արևելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար: Հաջողությամբ լուծելով իր առջև դրված խնդիրները և Պոլովոժիեում հաստատելով խաղաղություն՝ նա նորից վերադառնում է Բելոռուսիա: 1918 թ. դեկտեմբերի 30-31-ին Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ տեղի է ունենում ՌԿ(բ)Կ Հյուսիս-արևմտյան մարզային VI կոնֆերանսը, որն այնուհետև հայտարարվում է Բելոռուսիայի կոմկուսի առաջին համագումար: Այն ընտրում է կենտրոնական բյուրո՝ Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ: Հաջորդ օրը՝ 1919 թ. հունվարի 1-ին, Բելոռուսիան հռչակվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Ալ. Մյասնիկյանն ստանձնում է այդ հանրապետության Կենտգործկոմի նախագահի և ռազմական գործերի ժողովի պաշտոնները: Ընտրվելով այդ կարևոր պոստերում՝ Ալ. Մյասնիկյանն իր բոլոր ուժերը նվիրաբերում է բելոռուս ժողովրդի ինքնուրույն պետականության ստեղծման ու ամրապնդման գործին: Հետագայում ԲԿԿ Կենտկոմը նշել է. «Ընկեր Մյասնիկյանի անունը, որպես Բելոռուսիայի կոմկուսի հիմնադրի և որպես Խորհրդային Բելոռուսիայի կառուցողներից մեկի, ընդմիջտ կմնա բելոռուս աշխատավորների հիշողության մեջ»¹⁶:

Հյուսիս-արևմտյան ռազմաճակատում և մարզերում եղած տարիներին Ալ. Մյասնիկյանը վիրիսարի աշխատանք է կատարում այդ երկրամասն օտար նվաճողներից ազատագրելու և Բելոռուսիայում ու Լիտվայում խորհրդային կարգեր հաստատելու ու ամրապնդելու գործում: Սկզբից նեթ նա ձեռնամուխ է լինում այդ մարզերում բոլշևիկյան կազմակերպությունների միավորմանն ու հեղափոխական-քաղաքական բանակի ստեղծմանը, գործամասերում կարողանում է հաստատել ամուր կարգապահություն, միջոցներ է ձեռնարկում նաև քայքայված տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ: Իր իսկ հիմնադրած «Զվեզդա», «Մոլոտ», «Բուրեվեստնիկ», «Ռևոլյուցիոննայա Ստավկա» թերթերում և բոլշևիկյան մամուլի մյուս օրգաններում նա հրապարակում է հարյուրավոր

¹⁶ «Заря Востока» (Тбилиси), 25. III. 1925.

հողվածներ, էլույթներ, հրամաններ ու հրահանգներ, որոնց միջոցով պարզաբանում է տեղական բնակչության առջև ծառայած հույժ կարևոր խնդիրները, աշխատում չեզոքացնել տարբեր ազգերի միջև առաջացած անջատողական ու ազգայնամոլական տրամադրությունները, բացահայտում է հակահեղափոխական տարրերի և գերմանալեհական ու չեխոսլովակյան օկուպանտների հեռահար և նենգադավ նպատակները:

Պատերազմական իրավիճակում Ալ. Մյասնիկյանին հաջողվում է նորաստեղծ խորհրդային այդ երկու հանրապետություններում առաջին հերթին մեծ դժվարություններով լուծել տնտեսական վերափոխումների խնդիրները, կարգավորել պարենավորման հարցերը, ապա ձեռնամուխ լինել կուլտուրական շինարարության աշխատանքներին:

Ալ. Մյասնիկյանը խիստ կարևոր նշանակություն էր տալիս կուլտուր-մշակութային ու կրթական հաստատությունների ստեղծման գործին և առանձնակի հոգատար վերաբերմունք ցուցաբերում դրանց նկատմամբ: Այդ օրերին գրած հողվածներից մեկում նա ասում է. «Բավական չեն միայն արհեստակցական միությունների սահմանափակ, երբեմն աղքատիկ ընթերցարանները և կամ չափազանց հազվագյուտ ու խղճուկ ակումբները: Մեզ հարկավոր են թատրոններ, լավ ընթերցարաններ ու գրադարաններ, ակումբներ ու հավաքատեղիներ: Թող այդ բանը նկատի ունենան մեր բարձր կուլտուրական ընկերները, մեր հեղինակները, գեղագետները, էսթետները և պրոլետարիատի հոգևոր սննդի ծարավ բոլոր մարդիկ»¹⁷: Թող զարմանք չհարուցի, եթե ասենք, որ դեռևս 1918 թ. ձմռանը՝ պատերազմական թեժ իրավիճակներում, նրա եռանդուն մասնակցությամբ Մոլդենսկում հիմնադրվում է համալսարան, որը, փաստորեն, առաջին խորհրդային բուհն էր այդ տարածաշրջանում: Ալ. Մյասնիկյանը նորաբաց այդ համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի հիմնադիր վարիչն ու այդ առարկայի առաջին դասախոսն է դառնում: Իսկ կուսակցության Մոլդենսկի գավկումը դիմում է ՌԿ(բ)Կ Կենտկոմին՝ Ալ. Մյասնիկյանին այդ համալսարանի ռեկտոր նշանակելու խնդրանքով¹⁸: Հետագայում նա մեծ ջանքեր է գործադրում նաև Մինսկում համալսարան հիմնադրելու համար, որի առթիվ գրում է. «Համալսարանը Բելոռուսիային անհրաժեշտ է տեղական կյանքի տնտեսական, տեխնիկական ու կուլտուր-կենցաղային բնույթի մի շարք նկատառումներով: Համալսարանը պետք է լինի Մինսկում, քանի որ Մինսկը երկրորդ խոշոր մշակութային քաղաքն է Լիտվա-բելոռուսական Հանրապետությունում»¹⁹:

1919 թ. գարնանը ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Ալ. Մյասնիկյանը Բելոռուսիայից տեղափոխվում է Մոսկվա, որտեղ սկզբում աշխատում է որպես ՌԿ(բ)Կ Մոսկվայի կոմիտեի ռազմական կազմակերպիչ և մայրաքաղաքի պաշտպանության օպերատիվ շտաբի պետ, ապա սեպտեմբերին ընտրվում է ՌԿ(բ)Կ Մոսկվայի քաղաքային ու նահանգային կոմիտեների առաջին քարտուղար: Այդ ընթացքում նա հսկայական աշխատանք է կատարում

¹⁷ Ալ. Մյասնիկյան. Երկեր հինգ հատորով, հ. 3, Երևան, 1985, էջ 419:

¹⁸ А. Ф. Мясников (Мясникян). Избранные произведения. М., 1985, с. 10–11.

¹⁹ Ալ. Մյասնիկյան. Երկեր հինգ հատորով, հ. 3, էջ 464–465:

մայրաքաղաքի կոմունիստների և աշխատավորների ուժերը համախմբելու ու քայքայված տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ. այդ պայքարից նա դուրս է գալիս հաղթանակած: Այլ. Մյասնիկյանի նախաձեռնությամբ մայրաքաղաքում կազմակերպվում են առաջին շաբաթօրյակները, հիմնադրվում է «Կոմունիստիչեսկի տրուդ» թերթը և այլն: Մակայն ռազմաքաղաքական իրադրությունը նորաստեղծ Խորհրդային Ռուսաստանում մնում էր լարված. Բելոռուսիան արևմուտքից շրջապատված էր ցարական բանակի մնացորդներով, օկուպացիոն ու տեղական հակախորհրդային ուժերով, արևելքից ու հարավից դեպի Մոսկվա էին շարժվում Կոլչակի ու Դենիկինի սպիտակգվարդիական բանակները, նրանց ետևից՝ օտարերկրյա ինտերվենտները, մայրաքաղաքում գործում էին հակախորհրդային տարրեր, որոնք կազմակերպում էին սադրիչ գործողություններ: Այս պայմաններում Այլ. Մյասնիկյանը կարողանում է հետևել մայրաքաղաքի կարգուկանոնին, հաստատում է ամուր կարգապահություն, լծվում է խորհրդային բանակաշինության գործին, որում, իրոք, մեծ են նրա ծառայությունները: Եվ պատահական չէ, որ նա, կուսակցական ու պետական ականավոր գործիչ լինելուց բացի, վաստակել է նաև ռազմական գործչի ու խոշոր գորահրամանատարի անուն, արժանացել համաժողովրդական սիրո ու համակրանքի:

Այլ. Մյասնիկյանի այդ տարիների գործունեության մասին հետագայում Ս. Մ. Կիրովը գրել է. «Երբ այս կամ այն ռազմաճակատում ուժեղանում էր ռազմական վտանգը, կուսակցությունը և հեղափոխական իշխանությունը նրան երկրի մի ծայրից փոխադրում էին մյուս ծայրը: Եվ ամենուրեք ու ամեն տեղ Մյասնիկյանը պատվով է կատարում հեղափոխականի իր պարտականությունները... Երբ անհրաժեշտություն էր ծագում աշխատանքի դեկն ուղղել դեպի խորհրդային շինարարությունը, Այլոշան այստեղ ևս առաջին շարքերում էր կանգնում: Երբ անհրաժեշտ էր լինում ուժեղացնել կուսակցական աշխատանքը խորհրդային պետության մեջ, մենք Մյասնիկյանին տեսնում էինք այնպիսի պատասխանատու աշխատանքի պոստում, ինչպես Մոսկվայի կոմիտեի քարտուղարի, իսկ իր կյանքի վերջին տարիներին՝ մեր կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեի քարտուղար... Եթե անհրաժեշտ էր ուժեղացնել արհմիութենական աշխատանքը, ապա Այլոշան այնտեղ էր: Եթե տնտեսական աշխատանքն ուժեղացնելու համար պետությունը պահանջում էր լավագույն, հաստատական, կայուն և հուսալի ընկերներ, – ապա Այլոշա Մյասնիկյանն այնտեղ էր: Մի խոսքով՝ Մյասնիկյանի կյանքի ուղին այն կորագիծն է, որը գծել է մեր հեղափոխությունը: Եվ երբեք, ոչ մի պայմանում, Մյասնիկյանին շրջապատողներից և ոչ մեկը թեկուզ ամենափոքր չափով չէր կարող կշտամբել նրան, թե նա ոչ այնքան լրիվ չափով է իրեն նվիրում այն աշխատանքին, որ հանձնարարում է նրան կուսակցությունը կամ բանվորագյուղացիական իշխանությունը...»²⁰:

²⁰ «Бакинский рабочий», 25. III. 1925.

* * *

Երբ Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, Ալ. Մյասնիկյանը, ինչպես ասվեց, ՌԿ(Բ)Կ Մոսկվայի քաղաքային և նահանգային կոմիտեների առաջին քարտուղարն էր: Այդ ժամանակ նրա հետ աշխատում էին հեղափոխական, կուսակցական ու պետական աշխատանքի մեծ փորձ ունեցող հայ ականավոր մի շարք գործիչներ, որոնց մեջ Ալ. Մյասնիկյանը՝ որպես հզոր անհատականություն, վեր էր բոլորից: Դրա համար էլ Հայաստանի կոմկուսը 1920 թ. դեկտեմբերի սկզբին խնդրանքով դիմել էր ՌԿ(Բ)Կ Կենտկոմին, որպեսզի վերջինս Ռուսաստանում աշխատող հայ գործիչներին, հատկապես Ալ. Մյասնիկյանին, գործուղեր Հայաստան՝ պատասխանատու աշխատանքի: Սակայն Ռուսաստանում ևս նման գործիչների պահանջարկը մեծ էր, ուստի ՌԿ(Բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն, 1920 թ. դեկտեմբերի 10-ին քննարկելով Հայաստանի կոմկուսի խնդրանքը, որոշում է կուսակցական ու խորհրդային մի շարք աշխատողների ուղարկել Հայաստան, բացի Ալ. Մյասնիկյանից ու մի քանի այլ գործիչներից, որոնց գործուղելու հարցը ժամանակավորապես հետաձգվում է: Ալ. Մյասնիկյանը Հայաստան է գործուղվում ավելի ուշ՝ 1921 թ. ապրիլի 21-ին՝ նույն օրը նեթ ընդգրկվելով ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի կազմում: Ապրիլի 13-ին՝ Մոսկվայից մեկնելուց առաջ, նա տեսակցություն է ունենում Վ. Լենինի հետ, որի ընթացքում նրանք մանրամասն զրուցում են Կովկասում տարվելիք աշխատանքների մասին: Այդ առթիվ հետագայում Ալ. Մյասնիկյանը գրել է. «Միանգամից պարզ դարձավ, որ Արևելքում կատարվելիք աշխատանքը բավական բարդ է և պատասխանատու, և այդ պատճառով էլ ես խնդրեցի ընկեր Լենինին՝ համառոտ շարադրել իր մտքերը թղթի վրա, նամակի ձևով, որպեսզի այդ նամակը ես կարողանամ հասցնել Կովկասի ընկերներին, որ նրանք կարողանան ղեկավարվել նրանով իրենց ամենօրյա աշխատանքում»²¹: Լենինը կատարում է Մյասնիկյանի խնդրանքը, որի արդյունքում ծնվում է «Աղբրեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» ուղղված հայտնի նամակը: Ալ. Մյասնիկյանին տրվել էր նաև Լենինի ստորագրությամբ մանդատ, որտեղ նշված էր նրան Կովկաս ուղարկելու նպատակը և տեղական կուսակցական ու խորհրդային բոլոր մարմիններին առաջարկված էր նրան ցույց տալ ամեն տեսակի աջակցություն:

Ալ. Մյասնիկյանը Մոսկվայից իր հետ բերում էր 20 վագոն հացահատիկ և այլ պարագաներ, որ Ռուսաստանի կառավարությունն ուղարկում էր սովի ճիրաններում հայտնված հայ աշխատավորությանը: Թիֆլիսում նա ներկայանում է ՌԿ(Բ)Կ Երկրային կոմիտեին, ջերմորեն ընդունվում Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի և Ֆ. Մախարաձեի կողմից, որոնց քաջ ծանոթ էր ու գիտեր հեղափոխական պայքարի տարիներից: Մայիսի 2-ին նա Վ. Լենինի նամակը ներկայացնում է ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի նիստի քննարկմանը: Որոշվում է այն հրապարակել մամուլում:

Այնուհետև Մյասնիկյանը լինում է Բաքվում, ծանոթանում Աղբրեջանի

²¹ Ալ. Մյասնիկյան. Երկեր, հ. 5, Երևան, 2007, էջ 305:

կյանքին, բանակցում Հայաստանի հետ տնտեսական հնարավոր կապեր հաստատելու խնդիրների շուրջ:

Բաքվում Ալ. Մյասնիկյանի գնացքին կցում են մի քանի նոր վագոն՝ բեռնված բուսական յուղով ու բրնձով: Այդպես նա ուղևորվում է Երևան, ուր լինելու էր առաջին անգամ:

Ալ. Մյասնիկյանը հոգով ու մտքով միշտ էլ կապված է եղել հարազատ ժողովրդի հետ: Թեպետ հանգամանքների բերումով նրա գործունեությունը ծավալվում էր Հայաստանից դուրս, բայց նա պարբերաբար հետաքրքրվում էր իր պատմական հայրենիքի ճակատագրով, հնարավորության սահմաններում օգտակար լինում նրան: Հատկապես Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Կովկասյան ճակատից ռուսական զորքերի դուրսբերումն անհանգստացնում էր նրան, քանի որ Թուրքիան, օգտվելով ստեղծված իրավիճակից, պատրաստվում էր Հայաստանի վրա նոր արշավանք սկսել: Այդ ժամանակ, ինչպես ասվեց, Ալ. Մյասնիկյանը Խորհրդային Ռուսաստանի զորքերի Գերագույն գլխավոր հրամանատարն էր: 1918 թ., երբ թուրքական զորքերն իրենց հարձակումներն էին սկսել Հայաստանի ուղղությամբ, նա Արևմտյան ռազմաճակատի իր հրամանատարության տակ գտնվող զորամիավորումներից հայ մարտիկներին հավաքագրում ու կազմակերպում էր կամավորական ջոկատներ և ուղարկում Հայաստան: Այդ ջոկատները կոչվում են Սարդարապատի ճակատամարտում, այնուհետև, անցնելով Ստ. Շահումյանի տրամադրության տակ, մասնակցում են Բաքվի կոմունայի պաշտպանությանը:

... 1921 թ. մայիսի 5-ին մտնելով Երևան՝ Ալ. Մյասնիկյանն արժանանում է հայ աշխատավորության ջերմ ընդունելությանը: Ապա ստանձնելով Հայաստանի հեղկոմի նախագահի պարտականությունները, ծանոթանում է գործերի դրվածքին: Մայիսի 9-ին Հայաստանի կոմկուսի Երևանի կազմակերպությունն ու արհմիությունները հրավիրում են միացյալ հանդիսավոր նիստ՝ նվիրված Մյասնիկյանի ժամանմանը: Նիստում նա հանդես է գալիս ծրագրային ճառով և ներկայացնում այն աշխատանքները, որոնք պետք է իրականացվեին Հայաստանում՝ երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար: Դա նրա հրապարակային առաջին ելույթն էր Երևանում: Մայիսի 15-ին էլ Երևանի կուսակցական կազմակերպության ժողովում հանդես է գալիս ՌԿ(բ)Կ X համագումարի արդյունքների մասին զեկուցմամբ:

Մայիսի 21-ին Հայաստանի հեղկոմը վերակազմվում է և նրա հիման վրա ստեղծվում է ՀԽՍՀ Ժողկոմխորհը, որի հիմնադիր-նախագահ և ռազմական գործերի ժողկոմ է ընտրվում Ալ. Մյասնիկյանը: Նրա փորձառու ղեկավարությամբ Հայաստանի նորաստեղծ խորհրդային կառավարությունը և կոմկուսը մեծ ջանքեր գործադրեցին ու նվազագույն կորուստների գնով կարողացան Լեռնահայաստանում ևս հաստատել խորհրդային կարգեր: Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ Խորհրդային Հայաստանը կարճ ժամկետում հասնում է զգալի նվաճումների: Առաջին հերթին նա ձեռնամուխ է լինում երկրում կարգավորելու քաղաքական կյանքը: «Մենք եկել ենք այստեղ ոչ թե քաղաքացիական կռիվ անելու, այլ աշխատավորությանը տանելու դեպի խաղաղ, հանգիստ աշխատանք», – հայտարարում է

նա ու ամեն ջանք գործադրում էր կրում խաղաղություն, հարևան հանրապետությունների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և եղած տարածայնությունները վերացնելու համար՝ դրանով իսկ շտկելով այն սխալներն ու թերությունները, որոնք թույլ էին տրվել հեղկովի կողմից մինչև իր գալը: Մյուս կարևոր խնդիրը քայքայված տնտեսության վերականգնումն էր, ժողովրդին ոտքի կանգնեցնելը, տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականներին տեղավորելը, որք ու անապաստան երեխաներին կերակրելն ու հագցնելը: Նրա նախաձեռնությամբ Ռուսաստանից ու մյուս հանրապետություններից հայթայթվում և Հայաստան են հասցվում սննդամթերքի ու նյութական օգնության առաջին բեռները: Երկրում մոլեգնող համաճարակն ու սովը տեղի են տալիս, կյանքն սկսում է աշխուժանալ, կազմակերպվում են շաքաթօրյակներ, հիմնադրվում կոոպերատիվ տնտեսություններ, Հովհ. Թումանյանի ղեկավարությամբ ստեղծվում է Հայաստանի օգնության կոմիտեն, լուրջ ուշադրություն է դարձվում գյուղի հոգսերին ու կարիքներին: Ամենուր ավրապնդվում է աշխատանքային կարգապահությունը, բարելավվում պետական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, երկիրն ընկնում է հունի մեջ, ժողովուրդն սկսում է հավատալ իր առաջնորդին ու գնալ նրա հետևից: «Այս երկիրը մերն է, – ասում է Մյասնիկյանը, – և չնայած, որ գտնվում է դժնդակ պայմաններում, բայց նա դուրս կգա այդ դրությունից ոչ կարեկցություն հայցելով, այլ աշխատավորության հուժկու բազուկներով: Դրությունը, այո, ծանր է, բայց երկիրը պետք է հանել այդ վիճակից», անհրաժեշտ է «վայրենացած ժողովրդին» վերադարձնել կուլտուրական կյանք²²:

Հատկանշական է, որ նրա ստորագրությամբ հրապարակված առաջին փաստաթղթերից են եղել Երևանը մաքրելու, բարեկարգելու և օրինակելի մայրաքաղաք դարձնելու մասին, անգրագիտության վերացման մասին ղեկրետները: ՀԽՍՀ Ժողկոմխորհի 1921 թ. սեպտեմբերի 27-ի նիստում որոշում է ընդունվում նաև թոշակներ նշանակել ու պարեն հատկացնել գրականության և արվեստի 18 նշանավոր գործիչների, այդ թվում՝ գրողներ Հովհ. Հովհաննիսյանին, Հովհ. Թումանյանին, Ալ. Շիրվանզադեին, Դ. Դեմիրճյանին, Հ. Հակոբյանին, Նար-Դոսին, Շ. Կուրդինյանին, Լեոյին, դերասաններ՝ Գ. Տեր-Դավթյանին, Հ. Աբելյանին, Սիրանույշին, Հ. Զարիֆյանին, Իս. Ալիխանյանին, Օ. Մայսուրյանին, Մ. Մանվելյանին, նկարիչներ՝ Գ. Բաշինջաղյանին, Ե. Թադևոսյանին և Մ. Սարյանին²³: Դրանից մեկ ամիս չանցած, դարձյալ Ալ. Մյասնիկյանի նախաձեռնությամբ, ՀԽՍՀ կառավարությունն ընդունում է նոր որոշում՝ Լուսավորության ժողկոմատին կից գրական-գեղարվեստական ֆոնդ ստեղծելու, գրական մրցանակաբաշխություններ անցկացնելու, գեղարվեստի աշխատողների տուն հիմնելու, գրահրատարակչական գործը կարգավորելու և այլ միջոցառումների մասին: Նրա ստորագրությամբ հրապարակված մյուս ղեկրետը (1921 թ. հոկտեմբերի 14) վերաբերում էր դպրոցական շենքերի ազատմանը: Կառավարությունն այդ ղեկրետով պահանջում էր՝ հանրապետության

²² Ալ. Մյասնիկյան. Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 400:

²³ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 26. X. 1921:

ամբողջ տարածքում 15-օրյա ժամկետում ազատել դպրոցական բոլոր շենքերը, որ գտնվում էին այլ հիմնարկների տրամադրության տակ, և վերադարձնել իրենց իսկական տերերին:

Այլ Մյասնիկյանը դիմում է աշխարհի տարբեր երկրներում ապրող հայ մտավորականությանը՝ վերադառնալ հայրենիք և նվիրվել նրա շենացման աշխատանքներին: Շատերն արձագանքում են մեծ հայրենասերի կոչին ու գալիս Հայաստան: 1921–1922 թթ. աշխարհի տարբեր քաղաքներից Երևան են տեղափոխվում ազգային մշակույթի շատ գանձեր, գրքեր ու անձնական հավաքածուներ, հիմնադրվում են բազմաթիվ գրադարաններ, թանգարաններ ու պատկերասրահներ, Երևանում բացվում է առաջին պետական թատրոնը, կազմակերպվում են գեղարվեստական ցուցահանդեսներ: Այլ Մյասնիկյանի հարուստ արխիվում պահպանվում են գրողներից ու մշակութային գործիչներից ստացված բազմաթիվ նամակներ ու գրություններ, որոնց թվում՝ Հովհ. Թումանյանի, Ռ. Մելիքյանի, Լեոյի և ուրիշների շնորհակալագրերը:

Լայնորեն հայտնի իրողություն է նրա հոգատարությունը մարդկանց կարիքների նկատմամբ: Այս առումով հատկապես նշելի է նրա վերաբերմունքը հետազայում աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի նկատմամբ²⁴:

Նման օրինակները շատ են՝ կապված Այլ Մյասնիկյանի պաշտոնավարության հետ թե՛ Հայաստանում և թե՛ Անդրերկրկումում աշխատելու շրջանում:

* * *

1922 թ. հունվարի 22–29-ը տեղի ունեցավ Հայաստանի կոմկոսի առաջին համագումարը, իսկ հունվարի 30-ից փետրվարի 4-ը՝ ՀԽՍՀ խորհուրդների առաջին համագումարը, որն ընդունեց Այլ Մյասնիկյանի անմիջական մասնակցությամբ ստեղծված Հայաստանի առաջին Սահմանադրությունը՝ նոր էջ բացելով հայ ժողովրդի պատմության տարեգրության մեջ: Այդպես հայ ժողովուրդը բռնեց ազգային վերածննդի և սոցիալիստական շինարարության ուղին, որը նրան դուրս բերեց նոր ափ:

1922 թ. փետրվարի 18–22-ը Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը, որը միավորեց Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի կոմկոսները և ստեղծեց երկրամասային մի միասնական կազմակերպություն: Համագումարն ընտրեց ղեկավար մարմին՝ ՌԿ(Բ)Կ Անդրկովկասյան երկրային կոմիտե, որի քարտուղար ընտրվեց Այլ Մյասնիկյանը: Դրանից անմիջապես հետո՝ մարտի 8-ին, Երևանում քննարկվեց Անդրկովկասյան հանրապետությունների միություն (դաշնություն) ստեղծելու հարցը և որոշվեց Լիազորական կոնֆերանս ուղարկել Հայաստանի պատվիրակությանը՝ Այլ Մյասնիկյանի գլխավորությամբ: Կոնֆերանսը տեղի ունեցավ Թիֆլիսում մարտի 11–12-ին: Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունները մտան ռազմական, քաղաքական և

²⁴ ՀԱԱ, ֆ. 4004, ց. 3, գ. 7, մաս 4, թ. 129, Ս. Ա մ ի ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 517–518:

տնտեսական սերտ համագործակցության մեջ, ստեղծվեց Անդրկովկասյան Դաշնությունը, որի բարձրագույն իշխանության մարմինն էր Լիազորական կոնֆերանսը, իսկ ղեկավար մարմինը՝ Դաշնակցային խորհուրդը: Մարտի 12-ին Ալ. Մյասնիկյանն ընտրվեց Դաշնակցային խորհրդի նախագահ: Խորհրդին կից ստեղծվել էր նաև Բարձրագույն տնտեսական խորհուրդ, որի ղեկավարությունը նույնպես վստահվեց նրան: Այդպիսով, Ալ. Մյասնիկյանը դարձավ Անդրկովկասի երեք հանրապետությունների թե՛ կուսակցական և թե՛ պետական ղեկավար առաջին դեմքը: Դրանից երկու օր անց՝ մարտի 15-ին, ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն որոշում է կայացնում Ալ. Մյասնիկյանին ետ կանչել Անդրկովկասից և նշանակել ՌԿ(Բ)Կ Հեռավորարևելյան բյուրոյի քարտուղար: Այդ որոշման դեմ, սակայն, Անդրերկրկոմը բողոքում է և խնդրում Մյասնիկյանին թողնել իր զբաղեցրած պաշտոններում: Մարտի 30-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն, քննարկելով այդ դիմումը, փոխում է իր որոշումը:

Թեպետ 1922 թ. մարտի 12-ից Ալ. Մյասնիկյանը փոխադրվում է Թիֆլիս, բայց իր կապերը երբեք չի խզում Հայաստանի հետ, դեռ ավելին՝ մինչև մայիսի վերջը շարունակում է ղեկավարել հանրապետության Ժողկոմխորհը, իսկ դրանից հետո միշտ իր ուշադրության կենտրոնում է պահում հայ ժողովրդի հոգսերն ու կարիքները թե՛ մայր երկրում, թե՛ Սփյուռքում:

Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանին միավորելու հարցում ևս Ալ. Մյասնիկյանը մինչև կյանքի վերջը մնացել է իր ամուր դիրքերում, բազմաթիվ փաստաթղթեր է կազմել ու վերադաս մարմիններին ներկայացրել հոգուտ այդ հարցերի դրական լուծման: Սակայն Ռուսաստան-Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում Թուրքիան ու Ադրբեջանը ներքին պայմանավորվածությամբ կարողացել են այդ իրավիճակներում հանդես գալ Խորհրդային Ռուսաստանին թելադրողի դերում՝ ի վնաս Հայաստանի: Մյասնիկյանն այդ պայմաններում միայնակ, պարզ է, ոչինչ անել չէր կարող²⁵: Այդ անհաջողությունները նա կապում է նաև 1921 թ. փետրվարյան հայտնի խռովության հետ, երբ Երևանում՝ հանդիսավոր նիստում արտասանած ճառում, ասում է. «Տաճիկների հետ ավելի հաջող պայմաններ կարող էինք կապել: Բայց չարագործները խանգարեցին: Եթե չլինեք դաշնակների վերջին ավանտյուրան, մենք այժմ ավելի լայն սահմաններ կունենայինք»²⁶:

Անդրկովկասում ևս Ալ. Մյասնիկյանը շարունակում էր գործուն մասնակցություն ունենալ խորհրդային բանակի շինարարության ու հզորացման գործին: Նրա ջանքերով է ստեղծվում Հայաստանի բանակը և Երևանում հիմնադրվում ռազմագիտական ուսումնարան: Մինչև իր կյանքի վերջը նա Կովկասյան հատուկ բանակի, ինչպես նաև խորհրդային զինված

²⁵ Այդ ուղղությամբ Ալ. Մյասնիկյանի ծավալած գործունեությունը բազմակողմանիորեն լուսաբանվել է վերջին շրջանում լույս տեսած մի շարք աշխատություններում, որոնցից են, օրինակ՝ Нагорный Карабах в 1918–1923 гг., Сборник документов и материалов, отв. ред. В. А. Микаелян. Ереван, 1992; Կ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թվականներին, Երևան, 2007, Գ լ. Պ է տ ր ո ս յ ա ն. Հայաստան. 1919–1922 թվականներ, հ. 1–2, Երևան, 2011 և այլն:

²⁶ Ա լ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն. Ը ն ա ի իր երկեր, էջ 336:

ուժերի բարձրագույն ղեկավար մարմնի՝ ԽՍՀՄ ռազմահեղափոխական խորհրդի անդամ էր: Ֆ. Ջերժինսկու, Կ. Վորոշիլովի, Մ. Ֆրունզեի, Վ. Մեժինսկու հետ մասնակցել էր Կարմիր բանակի առաջին կանոնագրքի կազմման և զինված ուժերի օպերատիվ-ստրատեգիական ու ռազմաքաղաքական խնդիրների մշակման աշխատանքներին:

Այլ Մյասնիկյանն ուղիղ երեք տարի՝ 1922 թ. մարտի 12-ից մինչև իր ողբերգական մահը՝ 1925 թ. մարտի 22-ը, եղել է անդրկովկասյան երեք հանրապետությունների ղեկավարը: Այդ ընթացքում նրա հմուտ ղեկավարությամբ Անդրկովկասում վիթխարի աշխատանք է կատարվել. կարգավորվել են ազգային հարաբերությունները, երկրամասի ժողովուրդների միջև հաստատվել է խաղաղ համագործակցություն, մեծ վերելք է ապրել երկրամասի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը: Նրա անմիջական նախաձեռնությամբ հիմնադրվել են գործարաններ, կազմակերպվել են բազմաթիվ տնտեսություններ, շարք են մտել հիդրոէլեկտրակայաններ, փորվել ջրանցքներ, ստեղծվել են ոռոգման ցանցեր, ավերակ գյուղերն ու քաղաքները փոխել են իրենց տեսքը, վերելք են ապրել արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը:

Այլ Մյասնիկյանը լուրջ ուշադրություն է դարձնում նաև բարձրորակ մասնագետների պատրաստմանը, բարձրագույն կրթության զարգացմանը երկրամասում, լինում է տեղի համալսարաններում ու ինստիտուտներում, հոգում նրանց կարիքները, հանդես գալիս դասախոսություններով: Նա Թիֆլիսում կազմակերպում է նաև եռամյա կրթությամբ Անդրկովկասյան 26 կոմիսարների անվան կոմունիստական համալսարանը, մշակում ուսումնական պլաններն ու ծրագրերը, հավաքագրում դասախոսական կազմ և ինքն էլ կարդում է դասախոսություններ, ղեկավարում գիտական խմբակներ, անցկացնում գործնական պարապմունքներ:

Լինելով բազմակողմանի զարգացած, անսպառ գիտելիքների տեր տեսաբան ու հրապարակախոս՝ նա ընթացք ու ուղղություն է տվել երկրամասի կուսակցական ու խորհրդային բազմակեզու մամուլի աշխատանքներին, իր անմիջական նախաձեռնությամբ հիմնադրել ու մինչև կյանքի վերջը խմբագրել է ՌԿ(բ)Կ Անդրերկրկուսի օրգան «Զարյա Վոստոկա» և «Մարտակոչ» թերթերը, «Կավկասկի բոլշևիկ» և «Նոր աշխարհ» հանդեսներն ու այլ պարբերականներ, լուրջ ուշադրություն է դարձրել գրահրատարակչական գործին: Կուսակցական ու պետական աշխատանքով զերբեռնված լինելով հանդերձ՝ նա ժամանակ է գտել զբաղվելու նաև հրապարակախոսությամբ ու գրաքննադատությամբ, հողվածներ է գրել նոր լույս տեսած գրքերի ու հանդեսների մասին, պատրաստել է զեկուցումներ ու հաշվետվություններ, ասորյա խնդիրների շուրջ հանդես եկել մամուլի էջերում, պատասխանել ամեն օր ստացվող հարյուրավոր նամակների: Այս ամենի հետ նա այդ ընթացքում գրել ու լույս է ընծայել մի շարք աշխատություններ, որոնցից են՝ «Գրական քննադատության մեթոդի մասին» (1922 թ.), «Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը» (1923 թ.), «Կոմունիստական կուսակցությունը և ազգային հարցը Անդրկովկասում» (1923 թ.), «Սոցիալիստական Հայաստանի ասորյա խնդիրները» (1924 թ.), «Կուսակցությունները զաղութահայության

մեջ» (1924 թ.) և այլն:

Ալ. Մյասնիկյանի ղեկավար մասնակցությամբ տեղի են ունեցել Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների I, II և III համագումարները: Նա ընտրվել էր ՌԿ(բ)Կ VI, VIII–XIII համագումարների պատգամավոր, իսկ վերջին XII և XIII համագումարներում ընդգրկվել էր նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմում: Ի դեպ, Ալ. Մյասնիկյանը լուրջ ջանքեր է գործադրել ԽՍՀ Միության ստեղծման համար՝ լինելով այդ հարցը նախապատրաստող հանձնաժողովի անդամ: ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարում նա ընտրվել է համամիութենական Կենտգործկոմի նախագահության անդամ:

Ինչպես նշել է Ս. Օրջոնիկիձեն, Ալ. Մյասնիկյանն «ազգային խաղաղության դրոշակակիրն էր այստեղ, Անդրկովկասում» և «Անդրկովկասյան Դաշնության սիրտը», բոլոր ազգերի ու ազգությունների սիրելին: «Նրա գրասեղանին էր հոսում այն ամենը, – գրել է Ս. Կիրովը, – ինչ որ արվում էր մեր Անդրկովկասում, այն բոլոր դառնություններն ու արցունքները, որոնցով ցավում էին աշխատավորները: Բայց նրա մոտ էին կենտրոնանում նաև այն բոլոր ուրախությունները, որոնցով ապրում էին Անդրկովկասի աշխատավորները»²⁷:

Չափազանց լարված են եղել Ալ. Մյասնիկյանի կյանքի վերջին օրերը: 1925 թ. մարտի 3-ին Թիֆլիսում նա մասնակցում է ԽՍՀՄ Կենտգործկոմի III նստաշրջանի աշխատանքներին, մարտի 12-ին Բաքվում՝ ԱդրխՍՀ խորհրդի IV համագումարում, հանդես է գալիս անդրկովկասյան հանրապետությունների համագործակցության ուժեղացման մասին ծրագրային ընդարձակ ճառով, մարտի 15-ին «Ջարյա Վոստոկա» թերթում ծավալուն հոդված է տպագրում Ադրկովկասի հիմնադրման 5-րդ տարեդարձի առթիվ, իսկ մարտի 21-ին այդ հոբելյանի առթիվ ողջույնի նամակ է հղում Ադրկովկասի Կենտկոմին: Այդ օրը «Մարտակոչ»-ում լույս է տեսնում նաև Նարինան Նարինանովի մասին նրա գրած մահախոսականը: Նույն օրը, որպես խմբագիր, կարդում, ստորագրում և տպագրության է ուղարկում «Կավկասյանի բոլշևիկ» հանդեսի առաջին համարը, որտեղ զետեղված էր նաև ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի աշխատանքների մասին գրած իր հոդվածը, ապա ստորագրում է նաև «Անդրկովկասյան մամուլի ցուցահանդես կազմակերպելու մասին» դեկրետը, պատասխանում գյուղերից ստացված մի քանի նամակների և այլն:

Մարտի 22-ին Ալ. Մյասնիկյանը պետք է մեկնեք Սուխում՝ մասնակցելու Աբխազական ԲԽՍՀ խորհուրդների համագումարին: Այդ չարաբաստիկ օրը՝ առավոտյան մինչև ժամը 11-ը, նա վերջնականապես խմբագրում է Բաքվում մարտի 12-ին իր արտասանած ճառի տեքստը և հանձնում տպագրության, որը, սակայն, առանձին գրքույկով լույս է տեսնում Թիֆլիսում, ետմահու՝ որպես նրա վերջին խոսքը: Ապա Անդրկովկասյան պետքադավարչության նախագահ Ս. Մոզիլնսկու և փոստ-հեռագրական ժողկոմատի

²⁷ «Бакинский рабочий», 27. III. 1925.

Անդրկովկասյան վարչության պետ, ՌԿ(Բ)Կ Անդրերկրկումի վերահսկիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ Գ. Աթարբեկյանի ու երկու օդաչուների հետ «Յունկերս» ինքնաթիռով ժամը 11.50-ին Թիֆլիսի օդանավակայանից օդ բարձրանալով՝ ուղղություն են վերցնում դեպի Սուխում: Սակայն հենց օդանավակայանի շրջակայքում՝ Դիդուբե թաղամասի մոտ, ժամը 12.10-ին ինքնաթիռը բռնկվում է բոցերով ու ենթարկվում աղետի. բոլոր ուղևորները տեղում գոհվում են:

Հայ ժողովրդի նվիրյալ գավակի ողբերգական մահվան բոթն իսկույն տարածվում է ողջ երկրով մեկ ու նրա սահմաններից դուրս: Անդրկովկասում մարտի 22–25-ը հայտարարվում են սգո օրեր, մամուլում օրեր շարունակ տպագրվում են ցավակցական բազմաթիվ հեռագրեր, գնահատանքի խոսքեր, հուշեր ու այլ նյութեր ԽՍՀՄ և Անդրկովկասյան Դաշնության ղեկավարների, մտավորականների, բանվորների ու գյուղացիների, հեղափոխական ու պետական ականավոր գործիչների կողմից, բոլորը սգում են Սյասնիկյանի ողբերգական մահը: ՌԿ(Բ)Կ Կենտկոմի օրգան «Պրավդա» թերթն իր առաջնորդողում նշում է, որ Ալ. Մյասնիկյանի և մյուսների կորուստը Ստ. Շահումյանի ու Բաքվի 26 կոմիսարների սպանությունից հետո երկրորդ ուժգին հարվածն էր կուսակցությանն ու խորհրդային պետությանը²⁸:

Մարտի 25-ին Թիֆլիսում տեղի է ունենում Ալ. Մյասնիկյանի և նրա հետ գոհված ընկերների աճյունների հուղարկավորությունը: Այդ օրը բազմամարդ սգո միտինգներ են տեղի ունենում Մոսկվայում, Մինսկում, Դոնի Ռոստովում, Անդրկովկասի բոլոր քաղաքներում: Նույն օրվա մամուլն ամբողջությամբ նվիրվում է գոհվածների հիշատակին: «Խորհրդային Հայաստան» թերթի մարտի 25-ի համարում տպագրվում է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Աշոտ Հովհաննիսյանի՝ Երևանի քաղխորհրդի սգո նիստում արտասանած ճառը՝ «Զոհված ընկերների հիշատակին» վերտառությամբ²⁹, որի մեջ նա համակողմանիորեն վերհանում է Ալ. Մյասնիկյանի և մյուս գործիչների վիթխարի դերը հեղափոխության հաղթանակի կոփման ու ԽՍՀՄ ստեղծման գործում՝ մասնավորապես նշելով, որ «դարագլուխ անձնավորող քաղաքական ու պետական գործիչների շարքում պիտի հիշվի Ալ. Մյասնիկյանի պայծառ անունը»: Նրա մահվան առթիվ գրված հոդվածներն ու նամակները եթե հավաքվեն ու հրատարակվեն, կարող են մի հսկայական հատոր կազմել: Այստեղ բերում ենք դրանցից միայն երկու օրինակ՝ ցույց տալու համար այն խոր վիշտը, որ ապրել է հայությունն ամբողջ աշխարհում:

Փարիզի «Բանվոր» թերթն իր 1925 թ. մարտի 29-ի համարում գրում էր. «Հայ ժողովուրդը քեզի չափ մեծ գավակ մը չէր տված դարերից ի վեր: Դու դրեցիր Հայաստանի Հանրապետությունը ամուր հիմքերի վրա, որ պետք է ապրի դարեդար: Դուն չհետևցար մեր հազար վեց հարյուր տարվա ավանդության, որով կոնակնիս դեպի Արևելք, ճակատնիս դեպի Արևմուտք դարձուցած էինք, արհամարհեցիր մեր 50 տարվա քաղաքականությունը,

²⁸ «Правда» (Москва), 26. III. 1925.

²⁹ Ա. շ. Հ ո Վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 29–42:

նտնակոխ արհիբ Բեռլին ու Սևր, նոր ճամփա մը գծեցիր մեզի, քաշեցիր հայ ժողովուրդը ետևեղ, միջավայրիդ ու դրացիներուդ հետ համաձայնեցար ու փրկեցիր անոր գոյությունը: Մենք քեզ շատ քարեր նետեցինք, շատ անեծքներ ուղղեցինք, բայց այսօր գլուխ կխոնարհեցնենք ու կխոստովանինք, թե դուն իրավունք ունեիր»:

Ավ. Իսահակյանը 1925 թ. ապրիլի 22-ին Վենետիկից Մ. Սարյանին ուղարկած նամակում, նկարագրելով ողջ սփյուռքահայության ապրած վիշտը, գրում էր. «Վերջապես այսօր գրում եմ քեզ. Երևանը ծաղկել է հիմա, գուցե կեռասը հասել է, Արարատյան դաշտը կանաչին է տալիս, լեռներից իջնում են զարնան հորդ ջրերը, և Ալեքսանդր Մյասնիկյանը չկա: Նա չկա այլևս, ամենալավ հայերից մեկը, ամենախելացի ու ամենաբարի բոլշևիկը:

Ամենաանկեղծ զգացումով ցավում եմ նրա կորուստը. նա ամեն հայի սրտի մեջ էր ապրում, և ամենքը ողբում են նրան: Հայության պաշտպանն էր նա ներկա դառն ժամանակներում... ո՞վ պիտի փոխարինի նրան, դա է նույնպես շատ մտածել տալիս ինձ... Ափսոս ն, անհուն ափսոս ն, ի՞նչ կարճ կյանք ունեցավ և ի՞նչ մեծ գործ կատարեց»³⁰:

Նրա կորուստն ահա այսպես էր ողբում ողջ հայ ժողովուրդը:

* * *

Մեր ժողովուրդն այսօր էլ վառ է պահում իր ականավոր գավակի չխամրող հիշատակը, նրա պայծառ կերպարը: Նրա աշխատություններն ու հոդվածները քանիցս հրատարակվել ու վերահրատարակվել են թե՛ Երևանում, թե՛ Մոսկվայում³¹: Այլ Մյասնիկյանի անունով են կոչվել շրջաններ ու գյուղեր, փողոցներ ու մշակութային օջախներ: Նրա կերպարը միշտ էլ եղել է ոգեշնչման աղբյուր, որի արդյունքն է Երևանի կենտրոնում վեր խոյացող նրա գրանիտե մոնումենտալ հուշարձանը (քանդակագործ՝ Ա. Շիրազ, ճարտարապետ՝ Ջ. Թորոսյան, 1981 թ.), որը երախտագետ ժողովրդի հարգանքի ու սիրո տուրքն է իր փառապանծ գավակի հիշատակին: Ցանկալի է, որ Երևանում նրա ապրած տան պատին նս ամրացվի հուշատախտակ և դա այն դեպքում, երբ մայրաքաղաքի կենտրոնական փողոցներն օր օրի հարստանում են կուսակցական ու պետական զանազան «ականավոր գործիչների» հուշատախտակներով:

Հայրենանվեր գործչի անադարտ կերպարին անդրադարձել են նաև մի շարք գրողներ ու արվեստագետներ: Հր. Քոչարն իր «Մեծ տարեգրության էջերից» գրքում բազմաթիվ էջեր է նվիրել Այլ Մյասնիկյանին, Ա. Ջուրաբովը նրա մասին գրել է «Ծնունդ» վիպակը, իսկ Մ. Շաթիրյանը՝ «Հեղափոխության գեներալը» մեծածավալ վեպը: Նրան նվիրվել են բազմաթիվ ակնարկներ ու բանաստեղծություններ, նկարիչներն ստեղծել են մի շարք կտավներ ու քանդակներ և այլն:

Այլ Մյասնիկյանի կերպարին դեռևս 1920-ական թվականներին անդրադարձել է Ե. Չարենցը, որն անձնական մտերմություն է ունեցել նրա հետ և բարձր է գնահատվել նրա կողմից: Չարենցը Մյասնիկյանի՝ վեհ մարդու

³⁰ Ա. Վ. Բ ու ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1979, էջ 206:

³¹ Տե՛ս սույն հոդվածի տողատակերում:

ու պետական գործչի կերպարին անդրադարձել է մի քանի անգամ, իր օրագրություններում նրա մասին գրել է. «Կյանքում իմ հանդիպած մարդկանցից ամենամեծ տպավորությունն ինձ վրա թողել է Ալ. Մյասնիկյանը: Առաջին հերթին հենց նրա արտաքինը խիստ տպավորիչ էր և աչքի ընկնող: Բոլոր էպիստեոններից նրան կսագեր «բրոնզաձույլ»-ը, որ և ես նրա վերաբերմամբ կիրառել եմ մի քանի անգամ իմ բանաստեղծություններում: Ոչ միայն մոնումենտալ դեմքը, այլև ինքն ամբողջովին կարծես ձուլված էր բրոնզից և թողնում էր լիքը, ինքնաբավ, լիակշիռ էության տպավորություն: Տպավորիչ էին և աչքերը, մուգ շագանակագույն, մի փոքր գորշ սպիտակուցներով,– նայվածքը թողնում էր ֆիզիկապես ճնշող տպավորություն: Քչերը կարող էին դիմանալ այդ նայվածքի ուժին և իրենց հայացքը չխոնարհել նրա ֆիզիկական ճնշման ներքո»³²: Մյասնիկյանի աջակցությամբ արտասահմանյան շրջագայությունների մեկնած Չարենցն այնտեղից նամակներ է գրել իր մեծ բարեկամին և իր տպավորությունները կիսել նրա հետ: Փարիզում լսելով Ալ. Մյասնիկյանի ողբերգական մահվան բոթը՝ նրան է նվիրել «Կոմունարների պատը Փարիզում» պոեմը և մի շարք այլ ստեղծագործություններ: 1933 թ. ապրիլի 15–16-ին Չարենցը Մյասնիկյանին է ձեռնադրել հետևյալ քառատողերը.

Ե՛լ, բարձրացի՛ր դագաղից և կրկի՛ն էրևա աշխարհին:
Աներեր, բրոնզյա քո ձեռքով կրկի՛ն մեր ընթացքը վարիր:
Դու կոչված էիր լինելու ղեկավար երկրի ու դարի.–
Քեզ տրված էր ոսկյա՛ մի բեկոր լենինյան վսե՛ մ հանճարից:–

Նաիրյան արև՛ն էր քո մեջ՝ լենինյան հրով ճառագած.
Կործանվող մեր երկրի համար դու եղար փրկության առաջաստ:–
Դու տվիր ընթացք և ուղի մեզ մինչև դարերն հեռակա.–
Նաիրյան արև՛ն էր քո մեջ՝ լենինյան հրով ճառագած³³:

Ալ. Մյասնիկյանը պատմական բացառիկ երևույթ էր, և նրա հիշատակը, անկասկած, վառ է մնալու սերունդների հիշողության մեջ:

АЛЕКСАНДР МЯСНИКЯН
(К 125-летию со дня рождения)

ВЛАДИМИР МАГАЛЯН

Резюме

Имя Александра Феодоровича Мясникяна (Мясников, 1886–1925) занимает должное место в новейшей истории армянского народа. Он был не только профессиональным

³² Ե. Չարենց. Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1967, էջ 480:

³³ Ե. Չարենց. Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1968, էջ 436–437:

революционером, незаурядным организатором, но и всесторонне подготовленным партийным и государственным деятелем, талантливым литератором – публицистом, видным полководцем, человеком большой культуры и эрудиции.

А. Ф. Мясникян родился в г. Нахиджеване-на-Дону (ныне один из районов г. Ростов-на-Дону) в трудовой армянской семье. Начальное образование получил в местном монастыре Сурб-Хач, потом окончил армянскую семинарию Нахиджевана-на-Дону. В 1904 г. переехал в Москву и поступил в Лаза-ревский институт восточных языков. В годы учебы, в 1906 г. он вступил в ряды РСДРП и вел активную пропагандистскую работу среди студентов и рабочих. Высшее образование получил в Московском уни-верситете, после чего служил в армии и по окончании службы был уволен в запас в офицерском звании.

В 1912–1914 гг. он работает помощником присяжного поверенного, ведет активную подпольную ре-волюционную работу, занимается литературно-публицистической деятельностью. Во время Первой мировой войны (1914–1918 гг.), А. Ф. Мясникян служил на Западном фронте. В 1918–1919 гг., как Вер-ховный главнокомандующий всеми вооруженными силами России, сыграл исключительную роль в борьбе за установление Советской власти в Белоруссии, создании компартии Белоруссии, был первым председателем Совнаркома и военным наркомом республики.

В 1919–1921 гг. А. Ф. Мясникян работает в Москве, сперва военным организатором Московского ко-митета партии, а с сентября 1919 г. – секретарем Московского и губернского комитетов РКП(б).

В марте 1921 г. оргбюро ЦК РКП (б) приняло решение направить А. Ф. Мясникяна на руководящую работу в Армению. Он был утвержден членом Кавбюро ЦК РКП (б). Вскоре он прибыл в Ереван. Арме-ния в то время находилась в тяжелом социально-экономическом и политическом положении. А. Ф. Мясникян, вместе с другими видными деятелями возглавил борьбу за преодоление этих трудностей.

В марте 1922 г. А. Ф. Мясникян избирается секретарем Закрайкома РКП (б), а в апреле – председателем ЗакЦИКа. Под его руководством за три года республики Закавказья добились значительных успехов в экономической, общественно-политической и культурной жизни. При его непосредственном участии была создана Закавказская федерация, а также СССР.

А. Ф. Мясникян трагически погиб в 39-летнем возрасте 22 марта 1925 г. в катастрофе самолета «Юн-керс» около тифлисского аэродрома вместе с председателем ЗакЧКа С. Могилевским и начальником Заксвязи Г. Атарбекяном.

ALEXANDER MYASNIKYAN
(To the 125th birth anniversary)

VLADIMIR MAGHALYAN

S u m m a r y

The name of Alexander Feodor Myasnikyan (Myasnikov, 1886–1925) takes a rightful place in the pages of the latest history of the Armenian people. He was not only a professional revolutionary, outstanding organizer, but also fully prepared party and government leader, a

talented writer – a publicist, a prominent military leader, a man of great culture and learning.

A. F. Myasnikyan was born in Nakhijevan-on-Don (now a district of Rostov-on-Don) in the labor Armenian family. The primary education received in the local monastery St. Khach, then graduated from the Nakhijevan-on-Don Armenian Seminary. In 1904 he moved to Moscow and enrolled in the Lazarev Institute of Oriental Languages. During his studies, in 1906, he joined the RSDLP and led an active propaganda work among students and workers. Higher education received at Moscow University and then served in the Army and upon completion of service was discharged at the rank of an officer.

In 1912–1914 he works as an assistant barrister, has had active underground revolutionary work, literary and journalistic activities. During World War I (1914–1918) A. F. Myasnikyan served at the Western Front. In 1918–1919, as the supreme Commander-in-Chief of all the armed forces of Russia, played a crucial role in the struggle for the establishment of the Soviet power in Byelorussia. He was the founder of the Communist Party of Byelorussia, was elected the first chairman of the CPC and military commissar of the Republic.

During 1919–1921 A. F. Myasnikyan works in Moscow – at first as the military organizer of the Moscow Party Committee, and since September 1919 – Secretary of the Moscow and the provincial committee of the RCP (b).

In March 1921, the organizational bureau of the RCP (b) decided to send A. F. Myasnikyan for employment in Armenia. He was appointed a member of the Caucasian Bureau of the RCP (b). Soon he arrived in Yerevan. Armenia at that time was in a difficult social-economic and political position. A. F. Myasnikyan, together with other prominent figures, led the struggle to overcome these difficulties.

In March 1922, A. F. Myasnikyan was elected the secretary of Zakkraykom of RCP (b), and in April – the Chairman of ZakTsIK. Under his leadership, over three years Transcaucasian republics have made significant progress in economic, social, political and cultural life. With his direct participation the Transcaucasian Federation was created, as well as the Union of Soviet Socialist Republics.

A. F. Myasnikyan died tragically at the age of 39 on March 22, 1925 in the crash of the “Junkers” near the Tiflis airport together with the Chairman of ZakChK S. Mogilev and the head of Zaksvyaz G. Atarbekyan.